Առաջ նրանց արդիւնքը ծախսւում էին ուրիշ բարեգործական նպատակների համար, իսկ այժմ կը ծախսենք մեր ժողովրդի զաւակների կրթութեան համար: Ժողովրդից ստացածը կրկին կը վերադարձնենք ժողովրդին:

— Դուք կարծում էք, Հայրիկ, միայն կրթութիւնը բաւակա՞ն կը լինի, — հարցրեց Ասլանը:

— Բաւական չի լինի, — պատասխանեց Հայրիկը: — Ժողովրդի զաւակներին ուսում տալով եւ նրանց միջոցներ չտալով իրանց համար ապրուստ գտնելու, մենք միայն կը պատրաստենք ուսումնական թշոառներ: Աղքատութիւնը այդ ժամանակ աւելի զգալի է լինում, որովհետեւ որքան աւելանում է մարդու մտաւոր զարգացումը, այնքան աւելանում են եւ նրա կենսական պահանջները: Ռամիկը մի կտոր ցամաք հացով գոհ է մնում, բայց երբ այբ ու բենը մտցրիր նրա գլխում, նա կը հասկանայ, որ միսը աւելի սնունդ է տալիս: Եւ սեւ կը լինի նրա օրը, եթէ միս գտնել չկարողանայ:

Ես զարմանում էի այդ եկեղեցականի դատողութիւնների վրայ. նա բոլորովին հակառակն էր ասում, ինչ որ խօսում էին միւս եկեղեցականները. նա չէր քարոզում աշխարհի ունայնութիւնը, նա չէր պախարակում կեանքի վայելչութիւնները, պնդելով, թէ մարմինը զրկելով, մարդիկ աւելի մօտենում են երկնքին, ուր պէտք է սպասել իսկական երջանկութիւնը:

— Այո՛, — աւելացրեց Ասլանը, — ուսումը պէտք է լինի միջոց կեանքի իրական պահանջները հայթայթելու համար: Ասացէք, խնդրեմ, Հայրիկ, ո՞րն է ձեր կարծիքով ժողովրդի այժմեան ամենաանհրաժեշտ պահանջը, կամ, այլ խօսքով, ինչո՞ւմն է նրա գլխաւոր հիւանդութիւնը, որը շուտափոյթ բժշկութեան կարօտ է:

Կարծես տխրութեան մի ամպ անցաւ Հայրիկի պայծառ դէմքի վրայ, եւ նրա գոյնը մռայլուեցաւ:

— Մեր ժողովրդի հիւանդութիւնը, — ասաց նա, — այնքան բազմատեսակ է եւ բաղադրեալ, որ անկարելի է մի քանի խօսքով բացատրել, պարոն բժշկապետ: Բայց ձեզ, որպէս բժշկի, աւելի հասկանալի պէտք է լինի, երբ հիւանդութիւնները բաղադրեալ են, այդ դէպքում, գտնում են ամենագլխաւորը, որ մահ է սպառնում հիւանդի կեանքին, եւ նրանից են սկսում բժշկութիւնը:

— Այդ իրաւ է: Բայց ո՞րն է գլխաւոր հիւանդութիւնը:

— Իմ կարծիքով գաղթականութիւնը: